ԷԿՈՊԱՐԵԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂԻ ՀԱՏՈՒԿ ՄԻՋՈՑՆԵՐԸ ԵՎ ԱՆՁՆԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ ՊԱՀԵԼՈՒ ԵՎ ԿՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«___» «_____» 2024 թվականի N ___ - Ն

ԷԿՈՊԱՐԵԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂԻ ՀԱՏՈՒԿ ՄԻՋՈՑՆԵՐԸ ԵՎ ԱՆՁՆԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ ՊԱՀԵԼՈՒ ԵՎ ԿՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էկոպարեկային ծառայության մասին» օրենքի 30-րդ հոդվածի 5-րդ մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Սահմանել էկոպարեկային ծառայողի հատուկ միջոցները և անձնական պաշտպանության միջոցները պահելու և կրելու կարգը ՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հայաստանի Հանրապետության **Ն. Փաշինյան**

վարչապետ

Հավելված

ՀՀ կառավարության 2024 թվականի

_____ ___-ի N __-Ն որոշման

Կ Ա Ր Գ

ԷԿՈՊԱՐԵԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂԻ ՀԱՏՈՒԿ ՄԻՋՈՑՆԵՐԸ ԵՎ ԱՆՁՆԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ ՊԱՀԵԼՈՒ ԵՎ ԿՐԵԼՈՒ

1. **ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

1. Սույն կարգով կարգավորվում են էկոպարեկային ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) ծառայողի (այսուհետ՝ Ծառայող) հատուկ միջոցները և անձնական պաշտպանության միջոցները պահելու և կրելու հետ կապված հարաբերությունները:
2. Ծառայողին պահելու և կրելու իրավունքով հատկացվում են Ծառայության սպառազինության մեջ ընդգրկված հատուկ միջոցներ և անձնական պաշտպանության միջոցներ:
3. Ծառայողին պահելու և կրելու իրավունքով հատուկ միջոցներ և անձնական պաշտպանության միջոցներ հատկացվում է «Էկոպարեկային ծառայության մասին» օրենքով սահմանված կարգով հատուկ ուսուցումն անցնելուց հետո:
4. Ծառայողներին պահելու և կրելու իրավունքով հատուկ միջոցներ և

անձնական պաշտպանության միջոցներ հատկացնելու իրավունքը վերապահվում է Ծառայության պետին:

2. ՀԱՏՈՒԿ ՄԻՋՈՑՆԵՐԸ ԵՎ ԱՆՁՆԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ ՊԱՀԵԼՈՒ ԵՎ ԿՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ

5. Պահելու և կրելու իրավունքով հատուկ միջոցներ և անձնական պաշտպանության միջոցներ ստացած Ծառայողը պարտավոր է սարքին, անվտանգ և մաքուր պահել ստացած հատուկ միջոցները և անձնական պաշտպանության միջոցները:

6. Հատուկ միջոցների և անձնական պաշտպանության միջոցների վնասումը բացառելու նպատակով այն պետք է կրել անվտանգության պահանջների պահպանմամբ:

7. Ծառայողին արգելվում է հատուկ միջոցները և անձնական պաշտպանության միջոցները փոխանցել այլ անձանց կամ թողնել առանց հսկողության՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերի:
8. Ծառայողի՝ հատուկ միջոցներով և անձնական պաշտպանության միջոցներով ծառայողական գործուղման մեկնելու դեպքում գործուղման վկայականում նշվում են դրանց տեսակը, համարը, արտադրության տարեթիվը և հաստատվում Ծառայության կնիքով:
9. Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս Ծառայողը հատուկ միջոցներով և անձնական պաշտպանության միջոցներով գործուղվում է միջպետական պայմանագրերով սահմանված դեպքերում և կարգով:
10. Հայաստանի Հանրապետության տարածքում գործուղման դեպքում՝ ժամանման վայրում հատուկ միջոցները և անձնական պաշտպանության միջոցները անվտանգ պահելու հնարավորության բացակայության դեպքում գործուղված Ծառայողը դրանք ի պահ է հանձնում մոտակա ոստիկանության բաժնի հերթապահ մաս:
11. Ծառայողին հատկացված հատուկ միջոցների և անձնական պաշտպանության միջոցների, դրանց տեխնիկական վիճակի նկատմամբ վերահսկողությունն իրականացվում է՝

1) Ծառայողի անմիջական ղեկավարի կողմից՝ յուրաքանչյուր շաբաթը մեկ անգամ՝ Ծառայողի ծառայության մեջ գտնվելու ժամանակ.

2) տվյալ ստորաբաժանման ղեկավարի կողմից՝ յուրաքանչյուր եռամսյակը մեկ անգամ.

3) տվյալ ստորաբաժանման սպառազինության համար պատասխանատու անձի (այսուհետ՝ Հերթափոխի տեսուչ) կողմից՝ տարեկան մեկ անգամ:

12. Այլ ստորաբաժանում տեղափոխվելու, ծառայությունից ազատվելու դեպքերում Ծառայողը պարտավոր է հատուկ միջոցները և անձնական պաշտպանության միջոցները հանձնել Հերթափոխի տեսուչին։
13. Ծառայողը ստացիոնար բուժման, ուսման կամ արձակուրդ մեկնելիս, ինչպես նաև հատուկ միջոցները և անձնական պաշտպանության միջոցները պահելու համար հուսալի պայմանների չապահովման դեպքում դրանք ժամանակավորապես ի պահ է հանձնում Հերթափոխի տեսուչին։
14. Ծառայողը, ստորաբաժանման ղեկավարի կարգադրությամբ, պարտավոր է հատուկ միջոցները և անձնական պաշտպանության միջոցները հանձնել, եթե՝

1) Ծառայողի կողմից խախտվել են սույն կարգով նախատեսված հատուկ միջոցները և անձնական պաշտպանության միջոցները պահելու և կրելու պայմանները.

2) Ծառայողը ժամանակավորապես մեկուսացվել է ծառայողական պարտականությունների կատարումից.

3) Ծառայողն ազատվել է Ծառայությունում ծառայությունից.

4) Ծառայողին արգելվել է հատուկ միջոցները և անձնական պաշտպանության միջոցները կրել՝ բժշկական եզրակացությամբ։

15. Հերթափոխի տեսուչին հանձնած հատուկ միջոցների և անձնական պաշտպանության միջոցների վերաբերյալ համապատասխան գրառում է կատարվում հատուկ միջոցների և անձնական պաշտպանության միջոցների հանձնման և ընդունման գրքում։
16. Հատուկ միջոցները և անձնական պաշտպանության միջոցները գործադրելու և օգտագործելու, ինչպես նաև դրանք կորցնելու կամ փչացնելու դեպքերում Ծառայողն անմիջապես զեկուցում է վերադասության կարգով և ձեռնարկում միջոցներ՝ դրանք վերանորոգելու, կորած հատուկ միջոցները և անձնական պաշտպանության միջոցները որոնելու համար։